ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
9	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Սվիտեր (կարճաթև)՝ ուսադիրներով (ՁԼ 13): Պատրաստվում է բաց կապույտ գույնի տրիկոտաժից (60-70% բամբակյա խտությամբ), խիտ գործվածքով, հանովի կոշտ ուսադիրների ամրակով, կոշտ օձիքով: Առջևի մասում ունի բացվածք, որը կոճկվում է 3 բաց կապույտ կոճակներով: Սվիտերի փեշերը երկտակ են, առաձգական գործվածքով: Ձախ կրծքավանդակի վրա առկա է վրադիր՝ բաց կապույտ կտորից՝ 14,5 X 12 սմ չափսերով, կափույրով, բաց կապույտ կոճակով կոճկվող գրպանով: Ուսադիրների մասը նույնպես կարված է բաց կապույտ բամբակյա կտորից: Կանացի սվիտերը կոճկվում է ձախից: Սվիտերի բացվածքի վերին մասը՝ 5-7 սմ է և չի կոճկվում: Ձախ թևքին առկա է թևքանշան (ՁԼ 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Սվիտերները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան սվիտերների պատրաստումը սվիտերների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Սվիտերների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև սվիտերների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու սվիտերների քանակները՝ համաձայն ձևավորված պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված,

	պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
9	